Հրատարակվում է **ԱՅԼԸՆՏՐԱՆՔ** Հետազոտական Կենտրոնի
գիտական խորհրդի որոշմամբ:
ՀՀ ԿԳՆ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի է ատենախոսությունների հիմնական
արդյունքների և դրույթների հրատարակման համար:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

եռամսյա գիտական հանդես

տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում

Հոկտեմբեր – Դեկտեմբեր, 2019թ.

Խմբագրական խորհուրդ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
դոկտոր, պրոֆեսոր
Խորհրդի նախագահ և
գլխավոր խմբագիր, ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԻՇԱ ՂԱՐԻԲՅԱՆ
դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
դոկտոր, պրոֆեսոր, ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՐԱՆՍԻՍ ԲԱՐՈՆ ՎԱՆ ԼՈՒՆ
դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

ՄԵՐԻԼԻՆ ԹԵՅԼՈՐ
դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

ՊԱՈԼՈ ԼԵՈՉԻ
դոկտոր, պրոֆեսոր, ԻՏԱԼԻԱ

ՍԵՐԳԵՅ ԿԱԼԵՆՋՅԱՆ
դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ

ԼԻԼԻԱՆ ՎԱՆ ՀՈՖ
դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

ՇԱՈԱ ՅԱՆԳ
դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

ԱՐՄԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, ՀԱՅԱՍՏԱՆ

ՋՈՆ ՈՒՈԼՇ
դոկտոր, պրոֆեսոր, ԹԱԻԼԱՆԴ

ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, ՀԱՅԱՍՏԱՆ

Research Center **ALTERNATIVE**

ALTERNATIVE Quarterly Journal
October – December, 2019

Editorial Board:

Tatoul Manasserian – Doctor of Sciences, Professor (Editor in chief), , ARMENIA
Grisha Gharibyan – Doctor of Sciences, Professor, ARMENIA
Vardan Bostanjyan – Doctor of Sciences, Professor, ARMENIA
Francis Baron Van Loon – Doctor of Sciences, Professor, BELGIUM
Marilyn Taylor – Doctor of Sciences, Professor, USA
Paolo Leoci – Doctor of Sciences, Professor, ITALY
Sergey Kalenchyan – Doctor of Sciences, Professor, RUSSIA
Liliane Van Hoof – Doctor of Sciences, Professor, BELGIUM
Xiaohua Yang – Doctor of Sciences, Professor, USA
Armen Safaryan – Doctor of Sciences, ARMENIA
John Walsh – Doctor of Sciences, Professor, THAILAND
Arman Martirosyan – Doctor of Science in Economics, ARMENIA

Исследовательский Центр **АЛЬТЕРНАТИВА**
АЛЬТЕРНАТИВА Квартальный Журнал
Октябрь – Декабрь, 2019

Редакционный Совет:

Татул Манасерян – доктор наук, профессор (Главный редактор, предсеталеь совета), АРМЕНИЯ
Гриша Гарибян – доктор наук, профессор, АРМЕНИЯ
Вардан Бостанджян – доктор наук, профессор, АРМЕНИЯ
Франсис Барон Ван Лун – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ
Мерилин Тейлор – доктор наук, профессор, США
Паоло Леочи – доктор наук, профессор, ИТАЛИЯ
Сергей Каленчян – доктор наук, профессор, РОССИЯ
Лилиан Ван Хоф – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ
Шаоа Янг – доктор наук, профессор, США
Армен Сафарян – доктор наук, АРМЕНИЯ
Джон Уолш – доктор наук, профессор, ТАИЛАНД
Арман Мартиросян – доктор наук, АРМЕНИЯ

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ *(24.09.2019 – 14.10.2019)*[1]
Սմբատ Սպարապետի դերը Կիլիկյան Հայաստանի ներքին և արտաքին մարտահրավերների հանգուցալուծման գործում 6

Աննա ՅՈԼՅԱՆ *(2.11.2019 – 15.08.2019)*
Ֆինանսական նորամուծությունների հիմնական գործառույթները և զարգացման արդի միտումները 13

Ռոբերտ ՔՈՉԱՐՅԱՆ *(15.10.2019 – 26.102019)*
Ստվերային տնտեսության դեմ պայքարը և դրամաշրջանառության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ հեռանկարները ՀՀ-ում 23

Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ *(13.10.2019 – 25.10.2019)*
GSP+ համակարգը՝ որպես ՀՀ առևտրային ռեժիմի բաղադրիչ տարր 31

Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ *(13.10.2019 – 25.10.2019)*
ԵՄ մրցակցային դիրքը ինովացիաների և գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորային աշխատանքների միջազգային համալիրում 37

Տիգրան ԲԵԳԼԱՐՅԱՆ *(23.11.2019 – 12.12.2019)*
Բնականարանաշինության ֆինանսավորման հիմնախնդիրները. փայամասնակցության պայամանգրերի ձևաչափից ծրագրային ֆինանսավորման անցումը ՀՀ-ում 50

Անի ՌՈՒԲԵՆՅԱՆ *(23.11.2019 – 10.12.2019)*
Առողջապահության ֆինանսավորման աղբյուրները և մատուցվող բժշկական ծառայությունները 58

Կարլեն ՄԱՐԳԱՐՅԱՆ *(29.11.2019 – 10.12.2019)*
Ֆինանսական ռեսուրսների հասանելիության էությունն ու կարևորությու-նը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համատեքստում 65

Կարլեն ՄԱՐԳԱՐՅԱՆ, Հայկ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ *(30.11.2019 – 12.12.2019)*
ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման հիմնական ուղիները ՀՀ-ում 74

Ռազմիկ ԻՍԱՀԱԿՅԱՆ *(31.10.2019 – 15.11.2019)*
Նորարարությունների դերը ՀՀ զբոսաշրջության ոլորտում 92

Տաթև ՀԱԿՈԲՅԱՆ *(16.10.2019 – 29.10.2019)*
Միջհամայնքային համագործակցության օրենսդրական կարգավորումը Հայաստանում 100

Ֆլորա ՍՈՂՈՅԱՆ *(3.10.2019 – 16.10.2019)*
Ինովացիոն գործունեության արդյունավետության գնահատման հիմնախնդիրները 105

Վարդան ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Ալիկ ՍԱՀԱԿՅԱՆ *(9.9.2019 – 2.10.2019)*
ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների մեծացման հնարավորությունները 111

Վահե ԹՈՒՄԱՆՅԱՆ *(14.10.2019 – 25.10.2019)*
Եվրասիական տնտեսական միության և Սինգապուրի Հանրապետության միջև կնքված ազատ առևտրի պայմանագրի տնտեսական վերլուծություն 123

Վահե ԹՈՒՄԱՆՅԱՆ *(26.10.2019 – 8.11.2019)*
ԵԱՏՄ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև 2018 թվականին կնքված ժամանակավոր համաձայնագրի տնտեսական վերլուծություն 131

[1] Փակագծերում նշված են խմբագրության կողմից հոդվածների ստացման և հետագայում տպագրության ընդունման ժամկետները

Սուրեն ԴԱՎԹՅԱՆ *(26.10.2019 – 17.11.2019)*
Վարկավորումը որպես գյուղատնտեսական մթերքների մթերող-վերամշակող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ գործիք 140

Սուրեն ԼԵՎՈՆՅԱՆ *(13.11.2019 – 26.11.2019)*
ՀՀ և ԵԱՏՄ համագործակցության քանակական վերլուծություն 152

Սուրեն ԼԱՈՆՅԱՆ, Ռոմիկ ՂԱԶԱՐՅԱՆ *(26.11.2019 – 9.12.2019)*
Հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում 159

Ռոմիկ ՂԱԶԱՐՅԱՆ *(29.10.2019 – 12.11.2019)*
Հետբուհական կրթությունը ՀՀ-ում 167

Մարիամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *(30.10.2019 – 14.11.2019) (25.10.2019 – 4.11.2019)*
Առևտրային բանկերի ներդրումային փաթեթների կառավարման միջազգային փորձը 175

Աշոտ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, Էդգար ԱՂԱԲԵԿՅԱՆ, Մարիամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ առևտրային բանկերի պետական պարտատոմսերով ներդրումային փաթեթների առանձնահատկությունները՝ եկամտաբերության տարբեր կորերի միջավայրում 180

Հայկ ՍՄԲԱՏՅԱՆ *(27.10.2019 – 5.11.2019)*
Կոնֆլիկտների կարգավորումը կազմակերպական կառավարման գործընթացում 188

Հայկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *(29.10.2019 – 9.11.2019)*
Մուլտիպլիկատորի էֆեկտը մոնոպոլացված տնտեսություններում 199

Լիաննա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ *(28.11.2019 – 11.12.2019)*
Մարդակային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները պետական կառավարման համակարգում 207

Լիաննա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ *(29.11.2019 – 10.12.2019)*
Մարդկային ռեսուրսների հավաքագրման առանձնահատկությունները պետական կառավարման համակարգում 216

Աննա ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ *(3.12.2019 – 15.12.2019)*
Ուսուցիչների դերը կրթության որակի կառավարման ապահովման խնդրում 224

Արփինե ՀԱԿՈԲՅԱՆ *(25.10.2019 – 2.11.2019)*
Ֆինանսական տեղեկատվության կառավարման գործող համակարգը առևտրային կազմակերպություններում 232

Սոնա ԿԱՐԱՎԱՐԴԱՆՅԱՆ *(24.11.2019 –5.11.2019)*
Բյուջետային ավիաընկերությունների մուտքը ՀՀ օդային տարածք 240

Գագիկ ՀԱԿՈԲՅԱՆ *(3.12.2019 – 10.12.2019)*
Ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեության միջազգային փորձը 248

Նելլի ԳՐԻԳՈՐՅԱՆ, Անահիտ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ *(11.12.2019 – 22.12.2019)*
Ձկանբուծության զարգացման ցանցակավանդակային եղանակի ներդրման ծրագրային քաղաքականությունը ՀՀ-ում 263

Հարություն ԹԵՐԶՅԱՆ, Անդրանիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ *(13.12.2019 – 22.12.2019)*
Տնտեսության ֆինանսական կայունության և դոլարայնացման հիմնախնդիրները 276

Հարություն ԹԵՐԶՅԱՆ, Անդրանիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ *(13.12.2019 – 25.12.2019)*
Դոլարայնացման ազդեցությունները գնաճի նպատակադրման համատեքստում 282

Աննա ԱՎԱԳՅԱՆ *(20.11.2019 – 6.12.2019)*
Երևանի ջրամատակարարման բնութագիրը կլաստերային վերլուծության մեթոդով 290

Անուշ ԹՈՒՄԱՆՅԱՆ *(10.11.2019 – 24.11.2019)*
Պարտադիր բժշկական ապահովագրավճարի կանխատեսումը իմիտացիոն մոդելավորման Մոնտե-Կառլոյի մեթոդով 299

Աստղիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *(4.11.2019 – 13.11.2019)*
Արտահաստիքային զբաղվածության գնահատման հիմնահարցերը ՀՀ-ում 311

Արգամ ԱՐՏԱՇՅԱՆ *(13.11.2019 – 25.11.2019)*
Դրոնների միջազգային շուկան և ՀՀ ներգրավվածությունը 317

Գևորգ ԱՍԼԱՆՅԱՆ, Էրիկ ԱԹԱՆԵՍՅԱՆ *(30.10.2019 – 12.11.2019)*
ՀՀ շինարարության դինամիկ վերլուծություն 323

Գևորգ ԱՍԼԱՆՅԱՆ *(13.11.2019 – 26.10.2019)*
ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկայի վերլուծություն 333

Գոհար ԱՂԱՋԱՆՅԱՆ *(19.11.2019 – 30.11.2019)*
Ֆինանսական կառավարման դերը տեղական ինքնակառավարման համակարգում 341

Լուսինե ՍԱՀԱԿՅԱՆ *(14.11.2019 – 25.11.2019)*
Բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը դասակի հրամանատարի կողմից ստորաբաժանման կառավարման ենթատեքստում 349

Կարինե ՓՈԼԱԴՅԱՆ *(27.11.2019 –5.12.2019)*
Նոր գործիք ՀՀ մրցակցության քաղաքականության մեջ. հակամրցակցային համաձայնության մասնակիցների համար պատժամիջոցներից ազատման ծրագիր 356

Հասմիկ ՄԱՆԱՆԴՅԱՆ *(23.11.2019 – 11.12.2019)*
Բանկի մրցունակություն. գնահատման մեթոդները, մեթոդների առավելությունները և թերությունները 363

Հայյան Ալդելա, Մահմուդ Ալդելա *(11.12.2019 – 25.12.2019)*
Թվային շուկայավարման ազդեցությունը Երևանի սպառողների գնման վարքագծի վրա 370

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ *(11.12.2019 – 24.12.2019)*
ԵԱՏՄ ֆինանսական անվտանգության ապահովման առանձնահատկությունները 381

Նարեկ ՄԿՐՏՉՅԱՆ *(12.11.2019 – 25.11.2019)*
ԵԱՏՄ շրջանակում պետական գնումների միասնական շուկայի ձևավորման խնդիրները 387

Ռոբերտ ՇԱՏՎՈՐՅԱՆ *(13.12.2019 – 21.12.2019)*
ՀՀ-ում դեղագործական բիզնեսի կառավարման համակարգի կատարելագործումը 399

Ռուզաննա ԱՐՄԵՆԱԿՅԱՆ, Լիանա ՀԱԿՈԲՅԱՆ *(20.10.2019 –5.11.2019)*
«Բարեկեցությունը» որպես տնտեսական կատեգորիա, դրա ձևավորման շուկայական պայմանները 405

Արսեն ՕՀԱՆՋԱՆՈՎ *(11.12.2019 – 24.10.2019)*
Ընկերությունների շահութաբերության բարձրացման ուղիները ՀՀ-ում 413

ՆՈՐ ԳՈՐԾԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կարինե ՓՈԼԱԴՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, համաձայնեցված գործողություններ, գնային համաձայնություններ, արարքի ծանրություն

Շուկայական տնտեսական հարաբերությունների ժամանակակից պայմաններում մրցակցության դերն ու էությունը հատկորոշվում է բազմաֆունկցիոնալությամբ և իր կարգավորման մեխանիզմներով ներթափանցում է տնտեսական կյանքի բոլոր ոլորտները: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և դրանցից բխող զարգացումներն աստիճանաբար ուժեղացրել են մրցակցությունը զարգացող երկրների ներքին և արտաքին շուկաներում: Այս գործընթացները ստիպում են երկրներին վերանայել իրենց տնտեսական քաղաքականությունը, մշակել նոր մոտեցումներ և ձևավորել մրցունակ ազգային տնտեսություն: Ազգային յուրաքան-չյուր տնտեսության կամ առանձին երկրի ներսում մրցակցային միջավայրի բարելավման շարունակական գործընթացն անհրաժեշտություն է երկրի հե-տագա զարգացման և մրցունակության բարձրացման համար:

Չնայած վերջին տարիներին զարգացող երկրներում իրականացվել են տնտեսական ոլորտի իրավական կարգավորումների մի շարք բարեփոխումներ, ապրանքների և ծառայությունների առանձին շուկաներում ձևավորված միջավայրը «լիարժեք» մրցակցային համարվել չի կարող: Ինչ վերաբերում է մրցակցության զարգացմանը խաթարող հիմնական խնդիրներին, դրանք հետևյալ են.

- ոչ արդյունավետ մրցակցային քաղաքականության վարումը,
- տնտեսության առանձին կարգավորվող ոլորտներում առողջ մրցակցության ձևավորման խոչընդոտումը,
- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման ոլորտում նորաստեղծ ընկերությունների՝ շուկա մուտք գործելու հավասար մրցակցային պայմանների բացակայությունը,

▪ առանձին ոլորտներում մրցակցության խթանմանն ուղղված քաղաքականության բացակայությունը,

▪ պետական օժանդակության միջոցով ընկերությունների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումը:

Միջազգային շուկայի ներկայիս իրավիճակն առանձնահատուկ է այն առումով, որ «գլոբալ» ընկերություններն ավելի մրցունակ են դառնում, մըրցակցային պայքարն ընկերությունների միջև ուժեղանում է և՛ առանձին երկրների տնտեսությունների ներսում, և՛ դրանց սահմաններից դուրս, իսկ տվյալ շուկայում գործող սուբյեկտների միջև մրցակցության սահմանափակմանն ուղղված համաձայնությունների և հակամրցակցային գործողության (վարքագծի) փաստերի բացահայտումն ավելի է դժվարանում: Ընդ որում, միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացի մեջ հասարակության առաջընթացն առաջադրում է նոր հիմնախնդիր, որն առնչվում է անդրըսահմանային շուկաներում նորագույն տեխնոլոգիաներն ակտիվ կիրառող տնտեսվարող սուբյեկտների մասնակցությամբ հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը: Գործնականում ապացուցվել է, որ գործարարին կարող է գայթակղել ոչ թե միմյանց հետ մրցակցելը, այլ գաղտնի համաձայնության գալը: Անգամ դասական տնտեսագիտության հիմնադիր Ա.Սմիթը նշել է, «Միևնույն առևտրով զբաղվող մարդիկ նույնիսկ ուրախ առիթներով կամ ժամանցի նպատակով միմյանց հազվադեպ են հանդիպում, սակայն խոսակցությունն ի վերջո ավարտվում է հանրության դեմ կայացրած գաղտնի համաձայնությամբ կամ գները բարձրացնելու որևէ հնարքով:»[264]: Եվ պատահական չէ, որ առանց պետական միջամտության հնարավոր չէ ապահովել տնտեսական կայունությունը, մրցակցային միջավայրի ձևավորումը ու մրցակցության զարգացումը: Հակամրցակցային համաձայնությունների հիմնական նպատակը մըր-ցակցության սահմանափակումն է կամ իսպառ վերացումը: Փորձագետները հակամրցակցային համաձայնությունների առումով հաշվել են տասնյակից ավել տարաբնույթ համաձայնեցված գործողություններ: Այնուամենայնիվ, հիմնականում ընդունված է առանձնացնել երեք տիպի գործարքներ՝

▪գնային համաձայնություններ (գների, սակագների, զեղչերի, հավելավճարի և այլ վճարների սահմանում կամ պահպանում),

[264] Ադամ Սմիթ, Ազգերի հարստություն աշխատություն, 1776 թ.:

▪ ապրանքային շուկայի բաժանում՝ ըստ տարածքային սկզբունքի, ապրանքների վաճառքի կամ գնման ծավալի, իրացվող ապրանքների տեսականու կամ վաճառողների կամ գնորդների (պատվիրատուների) կազմի,

▪ հանրային ու մասնավոր հատվածի գնումների ոլորտում[265] մրցույթներին (տենդերներին) մասնակցելուն կամ դրանց հայտարարելուն վերաբերող համաձայնեցված գործարքներ:

Չնայած վերջին մի քանի տարիներին տարբեր երկրների հակամենաշնորհային կամ մրցակցության մասին օրենքներում իրականացվել են բազմաթիվ փոփոխություններ, և տնտեսական համակարգերում ներառվել են մրցակցության պետական կարգավորման նոր մեխանիզմներ, հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և այդ առումով իրավախախտման ապացուցումը եղել և մնում են մրցակցային քաղաքականությունը կիրարկող մարմինների ուշադրության կենտրոնում: Ընդ որում, փոփոխությունների պատճառները մի կողմից օրենսդրության ոչ հստակ ձևակերպումներն են, մյուս կողմից զարգացող երկրների տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգում տվյալ իրավախախտումը հաստատող անհրաժեշտ ապացույցների և չափորոշիչների առումով հստակ մեխանիզմների բացակայությունը: Այս առումով, մրցակցային մարմինների արդյունավետ գործունեությունն էականորեն կախված է նաև տվյալների հավաքագրման ձևերից, ստացված տեղեկատվության մշակումից և իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա գնահատման եղանակից: Տնտեսական մրցակցության պաշտպանության առումով Հայաստանում պետական կարգավորման գործընթացը սկսվել է դեռևս 2001թ.: Թեև նորանկախ պետության տնտեսության զարգացման համար այդ ժամանակահատվածը բավականին կարճ է, սակայն ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունները և միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին համապատասխան կիրառվող մեխանիզմների կատարելագործումը Հայաստանի գործարար միջավայրի բարելավման վրա դրական ազդեցություն են ունեցել: Փոփոխությունների արդյունքում ընդլայնվել են տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրականացնող մարմնի լիազորություններ-

[265] "Գնումներ" նշանակում են ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերում՝ https://www.uncitral.org/pdf/english/texts/procurem/ml-procurement-2011pdf (էջ 5):

ը, սահմանվել են վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներ և ավելացվել է նոր գործիքակազմ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով[266] ամրագրվել է պետական պաշտոնյաների հակամրցակցային գործունեության դրսևորումը ու հակամրցակցային իրավական ակտերի արգելող նորմ[267]: Սակայն հակամրցակցային համաձայնությունների բացահայտման համար վարչական վարույթների իրականացումը և տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումներ իրականացրած կամ իրականացնող սուբյեկտների ու պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառումը բավականին բարդ և գային առումով երկար ժամանակ պահանջող գործընթաց է: Վարչական վարույթների իրականացումն ավելի է բարդանում՝ կապված մրցակցության ուղղակի կամ անուղղակի սահմանափակմանը հանգեցնող համաձայնեցված գործողությունների հայտնաբերման և դրանց գոյության հանգամանքի ապացուցման հետ: Սա բնորոշ է ոչ միայն զարգացման փուլում գտնվող Հայաստանին, այլև զարգացած երկրներին՝ պակաս չափով: Գործընթացը խնդրահարույց է նաև տնտեսվարող սուբյեկտների համար, հատկապես գերշահույթ ստանալու մեղադրանքի, հակամրցակցային համաձայնություններին մասնակցելու արդյունքում հեղինակության անկման և տնտեսական հետևանքների, այդ թվում՝ տուգանքների և երրորդ անձանց պատասխանատվության ենթարկելու առումով: Երկակի բնույթի այս հակադրության փոխզիջման միջոց է ավելի մեղմ պատասխանատվության քաղաքականության (տուգանքի չափի նվազեցում) կիրառումը, ինչը թույլ է տալիս հանրության շահի պահանջմունքների և իրավական պատասխանատվության սկզբունքներով պետության մակարդակով հավասարակշռել կատարված արարքի ծանրության, հակամրցակցային համաձայնությունների արգելման գործողությունների արդյունավետության և պատասխանատվություն կրելու անխուսափելիության միջև:

Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող կամ պատասխանատվության միջոց չկիրառելու քաղաքականությունը մի կողմից մրցակցային կամ հակամենա-

[266] ՀՀ օրենք Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին, 23.03.18 (ՀՕ-249-Ն):
[267] Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին, ՀՀ օրենք, 5 գլուխ,16.3 հոդ.:

շնորհային մարմինների համար արժեքավոր տեղեկատվության ստացման աղբյուր է, որը նպաստում է հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը, կանխմանը և արգելմանը, իսկ մյուս կողմից տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար «բարդ» իրավիճակից դուրս գալու «քաղաքակիրթ» ճանապարհ է:

Պատասխանատվությունը մեղմելու կամ դրանից ազատելու քաղաքականության կամ այսպես կոչված «պատժամիջոցների մեղմման ծրագրի»[268] հիմնական նպատակը հակամրցակցային համաձայնության մասնակիցների ինքնակամ տեղեկություն (բավարար փաստացի ապացույցներ) ներկայացնելն է՝ համաձայնության մասնակիցների հայտնաբերման և գործարքի փաստի բացահայտման համար: Ինքնակամ բացահայտվողների հանդեպ տուգանքների չափերը նվազեցվում են կամ ամբողջովին ներվում:

Հայաստանում «պատժամիջոցների մեղմման ծրագիրը» գործում է 2011թ. (լրամշակվել է 2018թ.), ըստ որի «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36.1 և 36.2 հոդվածներով սահմանվել են հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի հանդեպ պատասխանատվության միջոց չկիրառելու և տուգանքի չափի նվազեցնելու դրույթները, բայց մինչ օրս որևէ իրավախախտում սրանով չի բացահայտվել, ինչի պատճառները տարբեր են: Նախ, բացակայում են ամբողջական օրենսդրական կարգավորումները: Երկրորդը, գործարար համայնքում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ուղղված գործառույթների՝ տուգանքի չափի, պատասխանատվությունը մեղմացնող և/կամ ծանրացնող հանգամանքերի վերաբերյալ պատկերացումների կամ իրազեկվացության ոչ լիարժեքությունն է: Փորձը ցույց է տալիս[269], որ «պատժամիջոցների մեղմման ծրագրի» շնորհիվ աճում է բացահայտման արդյունավետությունը, բայց ինքնակամ բացահայտվելու հնարավորությունը հաճախ կարող է բավարար չլինել հակամրցակցային համաձայնությունների

[268] Այս առումով որպես եզրույթ կիրառվում է «հանդուրժողականության քաղաքականություն» արտահայտությունը, այն անգլերեն «leniency policy» եզրույթի թարգմանություն է:

[269] Վերջին երկու տասնամյակներում, ինչպես ԱՄՆ-ում, Եվրոպական Միությունում, այնպես էլ ՌԴ-ում, այս սկզբունքը հանգեցրեց հակամրցակցային համաձայնությունների (կարտելների) բացահայտման կտրուկ աճի: Չնայած այդ երկրների մոտեցումները տարբեր են, սակայն բոլորն ունեն ընդհանրական հատկանիշներ, այդ թվում օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնելու լիազորություններ:

բացահայտման համար, որի անկատարությունն ապացուցվում է ՀՀ և արտերկրի փորձով: Աշխարհում ինքնակամ բացահայտվելու հստակ շարժառիթների ակնհայտ գործոններ են նաև մրցակցային և հակամենաշնորհային մարմիններին տեսչական (առանց նախազգուշացման ստուգումների իրականացման) բավարար լիազորությունների տրամադրումը և արարքի ծանրությանը համապատասխան պատժամիջոցի կիրառումը: Ամեն դեպքում, Հայաստանը կարող է համաշխարհային գործընթացներին համարժեք մասնակից լինել, բայց ակնհայտ է, որ որոշ խնդիրների համար օրենսդրությունը պետք է վերանայվի: Այս առումով Հայաստանն այն բացառիկ երկրներից է, ուր տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմիններին նման իրավական լիազորություններ չեն վերապահվել: Անշուշտ, խնդրի լուծման անհրաժեշտ պայման է ոչ միայն արժանահավատ տեղեկատվական և մեթոդական հիմքերի ձևավորումը, այլև իրավասու մարմնին մրցակցության քաղաքականության իրականացման գործում տեսչական (առանց նախազգուշացման ստուգումների իրականացման) և օպերատիվ-հետախուզական[270] լիազորություններով օժտելը: Իսկ նման լայն լիազորություններ և գործառույթներ տրամադրելու դեպքում գործընթացի արդյունավետ իրականացման համար կպահանջվի ոչ միայն օրենսդրորեն վերապահել գործունեության իրավունքների նոր շրջանակ, այլև հարկ կլինի սահմանել մրցակցային, իրավապահ և դատական մարմինների փոխգործակցության հստակ մեխանիզմներ: Համակարգի անկախությունը և հաշվետվողականությունն ապահովելու, ինչպես նաև գործառույթային խնդիրներն արդյունավետ կատարելու նպատակով անհրաժեշտ են նաև իրականացնել բավարար գործնական քայլեր մրցակցային քաղաքականությունը կիրարկող մարմինների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության բարձրացման և հնարավոր կոռուպցիոն սխեմաներում ներգրավվածության կանխման ուղղությամբ:

Այս ամենը թույլ կտան առավել արդյունավետ կանխարգելել և բացահայտել հակամրցակցային հանցավոր դրսևորումները, պետությանն աջակցել հավասար մրցակցային պայմանների ապահովմանը և խթանել պետական իրավասու մարմինների արդյունավետ փոխգործակցությանը:

[270] ՀՀ Քր. օրենսգիրքի թիվ 198 հոդվածով նախատեսվում է պատասխանատվություն տնտեսական մրցակցությունը խաթարող որոշ գործողությունների համար;

Կարինե ՓՈԼԱԴՅԱՆ

Նոր գործիք Հայաստանի Հանրապետության մրցակցության քաղաքականության մեջ. հակամրցակցային համաձայնության մասնակիցների համար պատժամիջոցներից ազատման ծրագիր

Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, համաձայնեցված գործողություններ, գնային համաձայնություն, արարքի ծանրություն:

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման արդիական խնդիրներից մեկը հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն է: Այդ գործընթացը բարդ է ու երկարատև: Մրցակցային քաղաքականությունը կիրարկող մարմինների արդյունավետ գործունեությունն էականորեն կախված է օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակից և «գաղտնի» համաձայնությունների բացահայտման համար կիրառվող գործիքակազմից: Միջազգային լավագույն փորձի համաձայն հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի առավել արդի և արդյունավետ միջոցներից են տեսչական (առանց նախազգուշացման) ստուգումները և «պատժամիջոցի մեղմման ծրագրի» կիրառումը:

Karine POLADYAN

A new instrument in competition policy of Republic of Armenia: anti-competitive agreements: The Leniency programme for parties of anti-competitive agreements

Key words: economic competition, price agreements, seriousness of the misconduct

One of the topical issues of the application of legislation in the field of protection of economic competition is the detection of anti-competitive agreements. This is a complex and lengthy process. The effective functioning of authorities implementing competition policies depends to a large extent on the mandate accorded by law and the tools used to identify “secret” agreements. According to the best international practice, the most up-to-date and effective means in the fight against anti-competitive agreements are conducting inspections and implementing of the “leniency programme”.

Карине ПОЛАДЯН

Новый инструмент в конкурентной политике Республики Армения: Программа смягчения ответственности для участников антиконкурентных соглашений

Ключевые слова: экономическая конкуренция, согласованные сделки, ценовое соглашение

Одним из актуальных вопросов применения законодательства в сфере защиты экономической конкуренции является выявление антиконкурентных соглашений. Этот процесс сложный и длительный. Эффективное функционирование органов, осуществляющих политику в области конкуренции, в значительной степени зависит от предоставленных законодательством полномочий и используемых инструментов выявления «тайных» соглашений. В соответствии с лучшей международной практикой наиболее современными и эффективными средствами борьбы с антиконкурентными соглашениями являются проведение проверок (без предупреждения) и применение «программы смягчения ответственности».